ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

5

Օֆելյա Ասատրյան

2021 թ.



Թեմա 1

Ես ապրում եմ լեռնային երկրում: Քարտեզն իմ գործիքն է՝ ժամանակի և տարածության մեջ:

Դաս 1

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Տուն, հայրենի տուն: Դու երբևէ մտածե՞լ ես այս երկուսի տարբերության մասին: Տունը կարող է կառուցվել ամեն տեղ, նույնիսկ օտար հողի վրա: Օրինակ՝ շատ հայեր իրենց շքեղ տները կառուցել և կառուցում են օտար հողի վրա: Այդ տները, թեկուզև հոյակապ են, բայց երբեք հայրենի տուն չեն կարող լինել: Հայրենի տունը կառուցվում է միայն հայրենի հողի վրա՝ հայրենիքում: Մեր հայրենիքը Հայաստանն է: Մենք այստեղ պետք է ապրենք, սովորենք, աշխատենք, կառուցենք: Մեր հայրենիքը շատ հին է: Այն բազում լավ ու վատ օրեր է տեսել: Տեսել է պատերազմներ, թալան ու ավեր, բայց մեր պապերն այնքան քաջ ու աշխատասեր են եղել, որ կարողացել են այն պաշտպանել ու հասցնել մեզ: Նրանք են այն անհատները, որոնք կերտել են այսօրվա մեր պետությունը:

Հայոց երկիրն իր անվանումը ստացել է մեր նախահայր Հայկի անունից: Երբ քաջ հսկա Հայկը իր աղեղով և երեքթևյան նետով սպանեց բռնակալ Բելին, դրանից հետո երկիրը նրա անունով կոչվեց Հայք, այսինքն՝ Հայաստան: Իսկ մենք բոլորս Հայկ Նահապետի սերունդներն ենք, և այս երկիրը բոլորիս հարազատ տունն է: Մենք այն ժառանգություն ենք ստացել մեր նախնիներից, որպեսզի մենք էլ մեր հերթին շենացնենք և փոխանցենք մեր որդիներին: Հայկական լեռնաշխարհի ամենահայտնի և ամենաբարձր լեռը Արարատն է՝ 5165 մ բարձրությամբ, որին հայերը անվանել են նաև Մեծ Մասիս, իսկ Հայաստանի Հանրապետության բարձր գագաթը Արագածն է՝ 4096մ:

Հայոց հայրենիքի ձևավորման ուղին շատ գեղեցիկ է ներկայացրել Մովսես Խորենացին՝ մեր պատմահայրը: Նա գրում է, որ բռնակալ Բելին հաղթելուց հետո, Հայկ նահապետի որդիներն ու թոռները բնակություն հաստատեցին Հայկական լեռնաշխարհի տարբեր վայրերում, հիմնեցին բնակավայրեր և դարձան գերդաստանների նահապետներ:

Այնուհետև Հայկից սերած նահապետները ժամանակի ընթացքում միավորվեցին և ստեղծեցին միասնական հայկական պետություն:

Ապրելով իրենց հայրենիքում, հայ ժողովրդի զավակները մշտապես շենացրել ու ծաղկեցրել են հայրենի երկիրը, պաշտպանել այն թշնամիներից: Նրանք այդ հողի վրա կառուցել են ամրոցներ, տաճարներ, պալատներ, եկեղեցիներ, խաչքարեր և այլ հուշարձաններ: Հայի ուժը ոչ թե զենքի մեջ է,այլ իր ոգու՝ համարձակ,տաքարյուն,արարող ու հայրենասեր: Ճիշտ է,փոքր է մեր հայրենիքը, բայց հայ ազգը ամբողջ մոլորակի վրա տաս միլիոնից էլ ավելի է ու մենք հպարտ ենք, որ Հայաստանում ու նրա սահմաններից դուրս ապրող այդ տաս միլիոն հայերից ենք:

***

«Թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով ու զորությամբ թույլ, և շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհումն էլ քաջության շատ գործեր կան գործված, գրելու և հիշատակելու արժանի...»:

Մ. ԽՈՐԵՆԱՑԻ

Նոր հասկացություններ

Հայկ և Բել, Մովսես Խորենացի,Մասիս,Արագած,ածու/ժողովուրդ/

Հարցեր և առաջադրանքներ

- Քո կարծիքով ի՞նչ է հայրենի տունը:
- Ինչպե՞ս է առաջացել մեր երկրի անվանումը:
- Այժմ ինչպե՞ս է կոչվում մեր երկիրը: Քարտեզի վրա ցույց տուր Հայաստանի Հանրապետությունը:

Քննարկման հարց

- Ո՞վ եմ ես, ո՞րն է իմ ազգային պատկանելիությունը

Դաս 2

ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ և ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ ԵՆ ԴՐԱՆՔ ՊԵՏՔ

Քարտեզների տեսակները և առանձնահատկությունները

Հասկանալու համար,թե մեր փոքիկ հայրենիքը ի՞նչ տեղ ունի քարտեզի վրա փորձենք մի քիչ ուսումնասիրել քարտեզը:

Ի՞նչ է քարտեզը :Քարտեզը Երկրի մակերևույթի ընդհանրացված պատկերն է հարթության վրա՝ որոշակի մասշտաբով,պայմանական նշաններով: Մասշտաբը այն թվային հարաբերությունն է, որը ցույց է տալիս, թե քարտեզի վրա պատկերված օբյեկտը քանի անգամ է փոքրացված իրական չափերից:

Ըստ մասշտաբի՝

- խոշորամասշտաբ (1:10 000 - 1:200 000 ու ավելի մեծ)
- միջին մասշտաբի (1:200 000 - 1:1 000 000)
- փոքր մասշտաբի (1:1 000 000-ից ավելի փոքր)

Պայմանական նշանները քարտեզի լեզուն են, քարտեզն ընթերցելու բանալին:

Մենք սովորաբար կիրառում ենք՝

1. **տարածական** (պատկերվում են անտառները, լճերը, ճահիճները և այլն) պայմանական նշաններ:
2. **գծային** (գետեր, սահմաններ, երկաթգծեր, խողովակաշարեր) պայմանական նշաններ:

Ծովի մակարդակից տարբեր բարձրություններն ու խորությունները ցույց են տրվում գունային երանգներով: Օվկիանոսներն ու ծովերը պատկերվում են կապույտով, և որքան կապույտը մուգ է, այնքան ծովը խորն է: Լեռները արտահայտվում են շագանակագույնի, դաշտավայրերը՝ կանաչի երանգներով և այլն: Պայմանական նշանների խումբը, որը զետեղված է քարտեզի վրա, կոչվում է ***լեգենդա***:

Աշխարհագրական քարտեզները դասակարգվում են ըստ բովանդակության, մասշտաբի, նշանակության, տարածքի ընդգրկման:

Ըստ բովանդակության քարտեզները լինում են

1. ընդհանուր աշխարհագրական/ընդհանուր աշխարհագրական /ռելիեֆը, ջրագրությունը, բուսական-հողային ծածկույթը, բնակավայրերը, սահմանները և այլն/:
2. թեմատիկ/ բնական երևույթները, բնակչության, տնտեսության տեղակայվածությունը, փոխադարձ կապերն, սոցիալական ոլորտը և այլն/:

Ըստ տարածքի ընդգրկման՝ լինում են.

1. տիեզերքի քարտեզներ
2. աշխարհի քարտեզներ
3. մայրցամաքների քարտեզներ
4. երկրների և տարածաշրջանների քարտեզներ

Քարտեզի վրա երկրի մակերևույթի կորությունը հնարավոր չէ արտահայտել, ուստի քարտեզներում լինում են որոշ աղավաղումներ: Ըստ նշանակության տարբերում ենք քարտեզների շատ տեսակներ/գիտատեխնիկական, մշակութային-կրթական, ուսումնական, տեխնիկական, զբոսաշրջային, նավիգացիոն/ճանապարհային և այլն/:

Տեղանքում կողմնորոշման ձևեր

Երբ նայում ենք հեռուն, մեզ թվում է, թե մի տեղ երկինքն ու երկիրը միանում են: Այդ երևակայական սահմանը, ուր երկինքն ասես միանում է երկրին, կոչվում է ՝ հորիզոնի գիծ, իսկ մինչև հորիզոնի գիծն ընկած տարածությունը, որ ընդգրկում է մեր հայացքը, կոչվում է հորիզոն: Հյուսիսը, հարավը, արևելքն ու արևմուտքը հորիզոնի կողմերն են: Տեղանքում կարող ենք կողմնորոշվել կողմնացույցով, քարտեզներով և այլն: Ժամանակակից աշխարհում տեղանքում կողմնորոշվելիս օգտվում ենք նաև տեղեկատվական տեխնոլոգիաներից և հատուկ ստեղծած ծրագրերից, որոնցից են Google Map, Google Earth ծրագրերը և այլն:

Ինչպես կողմնորոշվել անտառում:

Անտառում կողմնորոշման մեծ հնարավորություններ կան: Անհրաժեշտ է հիշել, որ անտառուղին ձգվում է հյուսիսից դեպի հարավ և արևելքից դեպի արևմուտք:

Հետևաբար անտառում ճանապարհը կորցնելիս հարկավոր է անընդհատ շարժվել մի ուղղությամբ, որպեսզի հնարավոր լինի գտնել անտառուղու որևէ խաչմերուկ:

Հատվող անտառուղիների մոտ լինում է կանգնեցված կոճղի մի հատված, որի վերին հարթեցված մասում գրված են թվեր: Այդ թվերի օգնությամբ հեշտ է գտնել հորիզոնի կողմերը: Երկու փոքր թվերի միջև եղած գիծը ուղղվում է հյուսիս, իսկ հարավային կողմը որոշվում է մեծ թվերի ուղղությամբ:

Հարցեր և առաջադրանքներ

- Ի՞նչ է քարտեզը
- Ի՞նչ է մասշտաբը
- Ի՞նչպես են դասակարգվում քարտեզները
- Ի՞նչ է պայմանական նշանը և քանի տեսակ են լինում
- Ի՞նչ գործիքների օգնությամբ ենք կողմնորոշվում տեղանքում

Նոր հասկացություններ

Քարտեզ, մասշտաբ, պայմանական նշան, լեգենդա, Google Map, Google Earth, հորիզոն, ռելիեֆ, կողմնացույց:

Քննարկման հարց

- Արդյո՞ք կարելի է միշտ վստահել քարտեզներին

Նյութի աղբյուրներ

https://hayrenagitakan.wordpress.com/2015/09/07/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%B4%D5%A5%D6%80-%D5%B0%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5%D5%B6%D5%AB%D6%84%D5%B6-%D5%A7%E2%80%A4%E2%80%A4%E2%80%A4%E2%80%A4/

https://www.imdproc.am/p/ashkharhagrutyun/9-dasaran/haykakan-lernashkharhi-ashkharhagrakan-dirqy-sahmannery-26704/ashkharhagrakan-dirqy-sahmannery-26705/re-661dcd90-62de-4031-a6e4-7e18a49044c9

Դաս 3

Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը, սահմանները, պատմաշխարհագրական միջավայրը

Քարտեզներում տեսնում ենք, որ Հայաստան աշխարհը պատկերված է որպես կենտրոնական դիրք գրավող տարածք, որը կրում է Հայկական լեռնաշխարհ անվանումը: Այն զբաղեցնում է շուրջ 400 հզ. կմ^2 տարածք: Հայկական լեռնաշխարհը գտնվում է Սև և Կասպից ծովերի միջև: Լեռնաշխարհից արևմուտք տարածվում է Փոքրասիական (կամ Անատոլիական) բարձրավանդակը, իսկ հարավարևելյան հարևանությամբ Իրանական բարձրավանդակն է:

Լեռնաշխարհի դիրքը բարձրադիր է, միջին բարձրությունը ծովի մակերևույթից 1500-ից 1800 մետր է:Հայկական լեռնաշխարհի հյուսիսում ձգվում է Կովկասյան լեռնաշղթան,հյուսիս-արևմուտքում՝ Պոնտական լեռնաշղթան, հարավում՝ Տավրոսյան լեռնաշղթան: Հայկական լեռնաշխարհի կենտրոնով ձգվում է Հայկական Պար լեռնաշղթան:

Հայկական լեռնաշխարհի գետերն ու լճերը

Հայկական լեռնաշխարհն՝ իր լեռնային բարձր դիրքի շնորհիվ, Առաջավոր Ասիայի խոշոր ջրաբաշխն է: Այստեղից են սկիզբ առնում Եփրատ, Տիգրիս, Արաքս/Երասխ/, Կուր, Ճորոխ, Հալիս, Գայլ և մի շարք այլ գետեր, որոնք թափվում են Պարսից ծոց և Կասպից, Սև ու Միջերկրական ծովեր:

Մեր հայրենիքի մայր գետը Արաքս է, որն սկիզբ է առնում Բյուրակն/Սերմանց/ լեռներից: Այնուհետև, ընդունելով Ախուրյան, Քասախ, Հրազդան, Ազատ և մի շարք այլ վտակներ, այն միանում է Կուրին և թափվում Կասպից ծով: Երասխի և նրա վտակների ջրերով ոռոգվում է Արարատյան դաշտը:

Երասխը Հայկական լեռնաշխարհի միակ խոշոր գետն է, որն ամբողջությամբ հոսում է մեր հայրենիքով: Երասխի կամ Արաքսի մասին նույնպես հյուսվել են այլևայլ ավանդություններ, իսկ ժողովուրդն այն կոչել է պարզապես Մայր Արաքս:

Հայկական լեռնաշխարհը հայտնի է իր երեք խոշոր և բազմաթիվ միջին ու փոքր մեծության լճերով: Դեպի ծով ելք չունեցող **Հայաստան**ում խոշոր լճերը սովորաբար կոչվել են ծով կամ ծովակ:

Խոշորներից **Սևանա լիճ**ը, որ հնում հայտնի էր Գեղամա կամ Գեղարքունյաց ծով անունով, ներկայումս գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում: Այն աշխարհի բարձրադիր լճերից է, ունի քաղցրահամ ջուր: Այս ձկնառատ (իշխան, գեղարքունի և այլն) լիճն են թափվում 29 գետեր ու գետակներ, իսկ նրանից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը: Լճում եղել է մեկ կղզի, որը Սևան-Հրազդան կասկադի կառուցման և լճի հայելու կրճատման հետևանքով վերածվել է թերակղզու:

Հայկական լեռնաշխարհի չքնաղ լճերից է **Վանա լիճ**ը կամ Բզնունյաց ծովը, որն ավելի քան երկուսուկես անգամ մեծ է Սևանա լճից: Զնայած լճի աղիությանը, նրանում բազմանում է տառեխ ձուկը, որ հնում աղ դրած վիճակում արտահանվում էր հարևան երկրներ: Վանա լճում դեռ հին ժամանակներից զարգացած է եղել նավագնացությունը,

իսկ նրա ափերին գտնվել են մի շարք նավահանգիստներ: Լիճն ունեցել է 7 կղզի, սակայն նրա ջրերի բարձրանալու հետևանքով երբեմն անցել են ջրի տակ: Վանա լճի ամենամեծ կղզին Աղթամարն է: Կղզու անունը նշանակում է Աղի ծով:

Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան մասում գտնվում է մեր հայրենիքի ամենամեծ լիճը, որ հնում կոչվել է Կապուտան, իսկ ներկայումս՝ Ուրմիա: Լճի ջրերը խիստ աղի են, որի պատճառով լիճը զուրկ է կենդանական և մասամբ բուսական աշխարհից: Հայկական լեռնաշխարհի միջին և փոքր մեծության լճերից հիշարժան են Հյուսիսային ծովակը, Գայլատու ծովակը, և Թորթումի լիճն իր նշանավոր ջրվեժով:

Հայկական լեռնաշխարհը հաճախակի կրկնվող երկրաշարժերի գոտի է: 1988 թ. տեղի ունեցավ Սպիտակի երկրաշարժը, որին զոհ գնացին տասնյակ հազարավոր մարդիկ: Հայկական լեռնաշխարհն այսօր հանգած հրաբուխների երկիր է: Դրանցից են Մասիսը, Արագածը, Սիփանը:

Հայկական լեռնաշխարհ

Հարցեր և առաջադրանքներ

- ՈրքՆ տարածք է զբաղեցնում Հայկական լեռնաշխարհը և Հայաստանի Հանրապետությունը:
- Ո՞ր գետերն են սկիզբ առնում Հայկական լեռնաշխարհից:
- Հայկական լեռնաշխարհում ի՞նչ հայտնի լճեր գիտեք:

Նոր հասկացություններ

Սև ծով, Կասպից ծով, Փոքրասիական/Անատոլիական/, Կովկասյան լեռնաշղթա, Իրանական բարձրավանդակ, Պոնտական լեռնաշղթա, Տավրոսյան լեռնաշղթա, Հայկական Պար լռնաշղթա, Եփրատ, Տիգրիս, Արաքս, Ճորոխ Գայլ, Սևանա լիճ, Վանա լիճ, Ուրմիո լիճ:

Նյութի աղբյուրներ

https://hayrenagitakan.wordpress.com/2015/09/07/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%B4%D5%A5%D6%80-%D5%B0%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5%D5%B6%D5%AB%D6%84%D5%B6-%D5%A7%E2%80%A4%E2%80%A4%E2%80%A4%E2%80%A4/

https://www.imdproc.am/p/ashkharhagrutyun/9-dasaran/haykakan-lernashkharhi-ashkharhagrakan-dirqy-sahmannery-26704/ashkharhagrakan-dirqy-sahmannery-26705/re-661dcd90-62de-4031-a6e4-7e18a49044c9

Դաս 4.

ԻՄ ՀԱՄԱՑՆՔԸ, ՄԱՐԶԸ և ԵՐԿԻՐԸ: ԳՑՈՒՂԻ ԿԱՄ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ-ՔԱՐՏԵԶ

ՀՀ տարածքը բաժանվում է մարզերի,մարզերն էլ՝համայնքների: Վարչատարածքային բաժանումը սահմանվում է օրենքով:Յուրաքանչյուր մարզ ունի իր ղեկավարը, որոնք կոչում են մարզպետներ: Մարզպետներին նշանակում և ազատում է Կառավարությունը: **Համայնքների ղեկավարներին ընտրում է համայնքի բնակչությունը:**Այսօր մենք ունենք փոքր՝ **մոտ** 30 հզ կմ^2, բայց անկախ պետություն, որը կոչվում է Հայաստանի Հանրապետություն/ՀՀ/: Այն կրճատ անվանում են նաև Հայաստան: Հայաստանի մայրաքաղաքը Երևանն է **է:Քաղաքամայր Երևանը հանրապետության գիտական,կրթական մշակութային,ֆինանսական և տնտեսական կենտրոն է:** Երևանն անվանում են վարդագույն քաղաք, քանի որ շենքերն այստեղ հիմնականում կառուցված են վարդագույն տուֆից: Մեր մայրաքաղաքն այսօր էլ շատ գեղեցիկ է, կառուցվել են բազմաթիվ նոր շենքեր, փողոցներ, տեղադրվել են հուշարձաններ: **Ներկայիս Երևանի՝որպես հայոց պետության մայրաքաղաքի,կառուցապատումն սկսել է 1924թ. գլխավոր հատակագծով,որի հեղինակն է մեծանուն ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը:**

Պետությունն հեշտ կառավարելու համար բաժանում են մասերի,որոնք տարբեր երկրներում տարբեր կերպ են կոչվում՝մարզ,երկրամաս,նահանգ,և այլն:

Հայաստանի վարչատարածքային

Երևանը ՀՀ **համայնքներից** մեկն է/**Երևանը սկզբում ստացավ մարզի,իսկ 2009թ-ի հունիսի 1-ից՝համայնքի կարգավիճակ**/:

Հայաստանի Հանրապետության տարածքը բաժանվում է տասը մարզի,որոնցից տարածք ով ամենամեծը Գեղարքունիքի մարզն է,ամենափոքրը՝Արմավիրի:ՀՀ բոլոր մարզերն ունեն արտաքին սահմաններ Վրաստանի,Ադրբեջանի/երկու կողմից/,Թուրքիայի,Իրանի ,ինչպես նաև Արցախի Հանրապետության ներկայումս վիճարկվող տարածքի հետ;Միայն Կոտայքի մարզն է,որ ոչ մի այլ երկրի հետ սահմաններ չունի:Այն ներքին մարզ է: Հայաստանի Հանրապետության մարզերն ու մարզային կենտրոններն են՝

Մարզ - մարզկենտրոն
Արագածոտն — Աշտարակ
Արարատ -Արտաշատ
Արմավիր -Արմավիր
Գեղարքունիք- Գավառ
Լոռի -Վանաձոր
Կոտայք- Հրազդան
Շիրակ- Գյումրի
Սյունիք- Կապան
Վայոց ձոր -Եղեգնաձոր
Տավուշ -Իջևան

Հայաստանի Հանրապետության մարզերը և մարզկենտրոնները

Որպեսզի Հայաստանի համաաշխարհագրական դիրքն ավելի ակնառու լինի,ի թիվս այլ պետությունների այն ևս պատկերվում է քարտեզի վրա՝թղթի,որում ընդհանրական ձևով,պայմանանշաններով և մասշտաբով/պայմանական չափ,որը ցույց է տալիս,թե տվյալ տարածքը որքան է փոքրացված հարթության վրա/ պատկերում են ընդգրկուն տարածքներ:

Հայաստանի տեղը աշխարհի քարտեզի վրա

Հայաստանի տեղը աշխարհի քարտեզի վրա՝ խոշորացված

Իսկ Հայաստանի առանձին,ավելի փոքր տարածքների մասին առավել մանրակրկիտ տեղեկություններ մեզ տալիս են հատակագծերը,որոնց վրա ևս պատկերվում են տարածքները փոքրացված՝մասշտաբով,պայմանական նշաններով,սակայն առավել մանրակրկիտ:Հատակագծերում կարելի է տեսնել փողոցներ,ճարտարապետական հուշարձաններ,եկեղեցիներ,այն ամենն ինչ կա տվյալ փոքր տարածքում,որը պատկերված է հարթության՝թղթի, վրա:

Հատակագծի օրինակ Երևանի կենտրոնում

Իմ ընտանիքի պատմությունը

Իմ հայրենիքում յուրահատուկ տեղ ունի նաև իմ ընտանիքը,որը ևս ունի պատմություն:

Ծագումով որտեղի՞ց ես: Այս հարցը հաճախ կարելի է լսել, երբ ծանոթանում են նույն ազգությանը պատկանող 2 մարդ: Դրանով հարց տվողը փորձում է ավելի լավ ճանաչել զրուցակցին: Օրինակ՝ եթե մարդը ծագումով գյումրեցի է, ապա նա պետք է որ կատակասեր լինի, լոռեցիները հայտնի են որպես միամիտ մարդիկ, գավառցիները սիրում են օղի խմել, վանեցիների մասին ասում են, թե իբր նրանք ժլատ են: Բոլոր այդ հատկանիշները մի քիչ չափազանցված են և ներողամիտ հումորով են նշվում: Դրանք արտահայտվում են զվարճապատումներով, ուրախ զրույցներով:
Եկեք միասին ստեղծենք տոհմածառի գծապատկեր և լրացնել՝ օգտվելով ընտանիքի անդամների ներկայացրած տեղեկություններից:

Ընտանեկան ծառի օրինակ

Հարցեր և առաջադրանքներ

Քարտեզի վրա գտի՛ր այն մարզը, որտեղ դու ապրում ես:

- Ի՞նչ գիտես քո բնակավայրի մասին:
- Փորձի՛ր նորություններ գտնել և ներկայացնել քո բնակավայրի անվանման, պատմությունը:
- Թվարկի՛ր ՀՀ մարզերը՝ իրենց մարզկենտրոններով:
- Փորձի՛ր գծել քո բակի, տան կամ սենյակի հատակագիծը:

Նոր հասկացություններ

Մարզեր/Արագածոտն, Արարատ, Վայոց ձոր, Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Տավուշ/ մարզկենտրոն/Արտաշատ, Աշտարակ, Արմաավիր, Գավառ, Վանաձոր, Հրազդան, Գյումրի, Կապան, Եղեգնաձոր, Իջևան/, մարզպետ, Արգիշտի I,

Քննարկման հարց

- Իմ ընտանիքի տոհմածառ ստեղծելու համար ի՞նչ տեղեկություններ են ինձ անհրաժեշտ ճշտել և ու՞մից, ըստ քեզ որո՞նք են ժառանգություն ապահովողի և շարունակողի դերերը:

Նյութի աղբյուրներ

https://hayrenagitakan.wordpress.com/2015/09/07/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%B4%D5%A5%D6%80-%D5%B0%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5%D5%B6%D5%AB%D6%84%D5%B6-%D5%A7%E2%80%A4%E2%80%A4%E2%80%A4%E2%80%A4/

https://www.imdproc.am/p/ashkharhagrutyun/9-dasaran/haykakan-lernashkharhi-ashkharhagrakan-dirqy-sahmannery-26704/ashkharhagrakan-dirqy-sahmannery-26705/re-661dcd90-62de-4031-a6e4-7e18a49044c9

Դաս 5

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՄԵՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Նախորդ դասից տեղեկացանք, որ ՀՀ-ը ուներ 10 մարզ, որը իր տարածքով մոտ 10 անգամ փոքր է Մեծ Հայքի տարածքից: Ք. ա. 4-րդ դարում Հայկական լեռնաշխարհը բաժանված էր 2 մասի, կազմված էր Մեծ Հայքից և Փոքր Հայքից:

Մեծ Հայքը բաղկացած էր 15 նահանգներից և մոտ 191 գավառներից: Նրա տարածքը կազմում էր մոտ 311.000 քառ. կմ: Փոքր Հայքը բաղկացած էր մոտ 80.000 քառ. կմ: Մեծ Հայքը ըստ «Աշխարհացույցի» բաժանվել Է 15 խոշոր նահանգների: Դրանք իրենց ընդարձակ տարածքի պատճառով հաճախ անվանվել են աշխարհներ: Հայաստանի Հանրապետությունն իր մեջ ներառում է Մեծ Հայքի 15 նահանգներից 4-ից որոշակի տարածք/Գուգարք, Ուտիք, Սյունիք, Այրարատ/: ԼՂՀ-ն կազմված է Արցախի և Սյունիքի նահանգներից:

1- Գուգարք
2-Տայք
3-Բարձր Հայք (Կարնո աշխարհ)
4-Ծոփք
5-Աղձնիք
6-Տուրուբերան
7-Կորդուք
8-Մոկք
9-Վասպուրական
10-Պարսկահայք
11-Փայտակարան
12-Ուտիք
13-Արցախ
14-Սյունիք
15-Այրարատ
Պատմության ընթացքում մեր տարածքների հետ միասին փոխվել են մեր հարևանները: Մենք հարևաններ ենք եղել Ասորեստանի, Պոնտոսի, Պարթևաստինի, Հռոմի, Արևելյան Հռոմի (Բյոզանդիայի), Կապադովկիայի, Վիրքի հետ:

Ըստ աշխարհացույցի Հայկական լեռնաշխարհի վարչատարածքային բաժանումները

Մեր հարևանները նորագույն շրջանում

Հայաստանի պաշտոնական անվանումը՝ Հայաստանի Հանրապետություն է, այն պետություն է Առաջավոր Ասիայում, թեև աշխարհա-քաղաքական և մշակութային առումներով գտնվում է արևելյան և հարավարևելյան Եվրոպայում: Հյուսիսում սահմանակցում է Վրաստանին/մայրաքաղաքը՝ Թբիլիսի, արևելքում՝

Արցախի հանրապետության /, արևելքում՝ Ադրբեջանին/մայրաքաղաքը՝ արևելքում /Արցախի Հանրապետությունը/մայրաքաղաքը՝ Ստեփանակերտ/, հարավում՝ Իրանին/մայրաքաղաքը՝ Թեհրան/, արևմուտքում՝ Թուրքիային/մայրաքաղաքը՝ Անկարա/: Հարավարևմտյան կողմում՝ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը/ տարածք պամական Հայաստանի Վասպուրական նահանգըում:/

Հարցեր և առաջադրանքներ

- Ք. ա. 4-րդ դարում վարչական ի՞նչ բաժանումներ կան:
- Որքա՞ն են Հայկական լեռնաշխարհի և ՀՀ տարածքները
- Մեծ Հայքի ո՞ր մասն է կազմում Հայաստանի Հանրապետությունը:
- Ո՞ր նահանգների տարածքներն են զբաղեցնում ՀՀ-ն և ԼՂՀ-ն:
- Նշեք, մեր պետության հին ու նոր հարևաններին:

Նոր հասկացություններ

Մեծ Հայք, Փոքր Հայք, նահանգներ/Գուգարք, Տայք, Բարձր Հայք, Ծոփք, Աղձնիք, Տուրուբերան, Կորդուք, Մոկք, Վասպուրական, Պարսկահայք, Փայտակարան, Ուտիք, Արցախ, Սյունիք, Այրարատ/: Ասորեստան, Պոնտոս, Պարթևաստին, Հռոմ, Արևելյան Հռոմ (Բյուզանդիա), Կապադովկիա: Վրաստան/Թբիլիսի/, Ադրբեջան/Բաքու/, Իրան/Թեհրան/, Թուրքիա/ Անկարա/:

Քննարկման հարց

- Ինչպե՞ս պետք է վերաբերվել հարևաններին:

Նյութի աղբյուրներ

https://hayrenagitakan.wordpress.com/2015/09/07/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%B4%D5%A5%D6%80-%D5%B0%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5%D5%B6%D5%AB%D6%84%D5%B6-%D5%A7%E2%80%A4%E2%80%A4%E2%80%A4%E2%80%A4/

https://www.imdproc.am/p/ashkharhagrutyun/9-dasaran/haykakan-lernashkharhi-ashkharhagrakan-dirqy-sahmannery-26704/ashkharhagrakan-dirqy-sahmannery-26705/re-661dcd90-62de-4031-a6e4-7e18a49044c9

Դաս 6

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ

Յուրաքանչյուր ազգ ունի իր խորհրդանիշները՝ ժողովրդի պատմությամբ, մշակույթով պայմանավորված արժեքներ, որոնք ազգի ինքնության վավերագրերն են, նրա ինքնատիպության բնորոշիչները, նկարագրի ամենավառ գծերը: Ակնհայտ է, որ պետական խորհրդանիշների գոյությունը ինքնանպատակ չէ. դրանցից յուրաքանչյուրն ունի մեծ արժեք ու նախապատմություն: Յուրաքանչյուր երկիր պետք է ունենա միայն իրեն հատուկ երեք խորհրդանիշներ՝ պետական դրոշը, զինանշանը, հիմնը կամ օրհներգը:

Դրոշ

Առաջին անգամ հայկական եռագույնը պաշտոնապես բարձրացվեց 1918 թ.-ի օգոստոսի 1-ին. Ազգային ժողովի բացման օրն առաջին անգամ ծածանվեց կարմիր-կապույտ-դեղին պաստառը: Անմիջապես հաջորդ օրը թերթերում լույս տեսավ կառավարական որոշումը, ըստ որի՝ բոլոր կազմակերպությունները պետք է պարտադիր եռագույն ունենային:

Գույների ընտրության ժամանակ կառավարությունը կանգ առավ հայկական վերջին պետականության՝ Կիլիկիայի թագավորության խորհրդանշի վրա: Կարմիրը, կապույտը և դեղինը զինվորական միավորումների գույներն էին: Հետագայում դեղինը որոշեցին փոխել նարնջագույնով: Գեղանկարիչ Մարտիրոս Սարյանն այլ տարբերակներ էր առաջարկել, որոնցից մեկը «ծիածանային» դրոշն էր: Սարյանը գրել է. «Եռագույն դրոշներ շատ կան, մեզ՝ որպես արևելյան ազգի, կսազի բազմագույն դրոշը... առաջարկում եմ մեր տառապած ու սիրելի հայրենիքի վրայով ծիածան անցկացնել»: Առաջին հանրապետության կարմիր-կապույտ-նարնջագույն դրոշը, ինչպես և հանրապետությունը, գոյատևեց 2,5 տարի՝ մինչև 1920 թ.-ի նոյեմբերի 29-ը: 1922 թ.-ի փետրվարին Հայաստանի Խորհուրդների առաջին հավաքը հաստատեց բոլշևիկյան դրոշը՝ վառ կարմիր ֆոնի վրա ՀԽՍՀ ոսկեգույն տառերով: ԽՍՀՄ փլուզումից հետո էլ վերադարձավ 1918 թ.-ի եռագույնը:
Պետական դրոշը կարելի է տեսնել նախագահի նստավայրի, Ազգային ժողովի, կառավարության և պետական այլ հիմնարկների շենքերի ճակատներին: Մեր դրոշը

պարտադիր պետք է լինի տարբեր երկրներում՝ Հայաստանի դեսպանատների շենքերի վրա: Այն բարձրացվում է տարբեր միջազգային մրցույթներում, երբ մեր մարզիկները հաղթում են:

Զինանշան

Զինանշան նշանակում է ժառանգություն:Հայաստանի զինանշանի մասին օրենքն ընդունվել է Հայաստանի Գերագույն Խորհրդի կողմից 1992 թվականի ապրիլի 19-ին: Վերականգնվել է Հայաստանի առաջին հանրապետության (1918-1920 թվականներ) զինանշանը, որի հեղինակներն են ճարտարապետ, Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոջոյանը: Հայաստանի պետական զինանշանի կենտրոնական մասում՝ վահանի վրա, պատկերված են հայկական չորս թագավորական
տոհմերի՝ Արտաշեսյանների, Արշակունիների, Բագրատունիների և Ռուբինյանների (Կիլի կյան թագավորություն) զինանշանները: Կենտրոնում է բիբլիական Արարատ լեռան պատկերը, որի գագաթին ուրվագծվում է Նոյյան տապանը:
Վահանի երկու կողմից պատկերված են առյուծ և արծիվ, որոնք խորհրդանշում են ոգու, իշխանության, աննկունության և արիության ուժը: Ներքևում պատկերված սուրը խորհրդանշում է հայ ժողովրդի պայքարը հանուն ազատության և անկախության, փետուրն ու հասկերը՝ հայ ժողովրդի ստեղծարար տաղանդը և խաղաղասիրությունը:

Օրհներգ

«Մեր հայրենիք», Հայաստանի ազգային օրհներգը: Ընդունվել է 1991 թվականի հուլիսի 1-ին և հիմնված է Առաջին Հանրապետության օրհներգի վրա՝ տեքստի չնչին փոփոխություններով: Հիմնի տեքստը վերցված է Միքայել Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունից: Այն առաջին անգամ հնչել է 1885 թվականի մարտի 15-ին, որպես Թիֆլիսի «Արծրունի» թատրոնում կայացած հայ առաջին քառաձայն համերգի առաջին երգը[1]: Հետագայում այն մշակել է նաև Բարսեղ Կանաչյանը:
«Հայաստանի Հանրապետության օրհներգի մասին» օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 25-ին]:
***
«ՀՀ դրոշի մասին» և «ՀՀ զինանշանի մասին» օրենքներն ընդունվել են 2006 թ. հունիսի 15-ին, իսկ ՀՀ պետական դրոշի օրը Հայաստանում առաջին անգամ նշվել է 2010 թվականի հունիսի 15-ին:
***

Հայաստանում դրոշի կիրառությունը կապվում է Հայկ Նահապետի անվան հետ, ով, հասնելով Վանա լճի ափը, դրոշ է պարզել:
Նոր հասկացություններ
Ալեքսանդր Թամանյան,Հակոբ
կոջոյան,Արտաշեսյան,Արշակունիներ,Բագրատունիներ,Ռուբինյաններ

Հարցեր և առաջադրանքներ

- Որո՞նք են Հայաստանի պետական խորհրդանիշները:
- Ինչ գիտեք դրոշի մասին
- Ո՞ր թվականին է առաջին անգամ ծածանվել եռագույն դրոշը ՀՀ-ում
- Ո՞վ է ՀՀ զինանշանի հեղինակը:
- Ովքե՞ր են ՀՀ օրհներգի խոսքերի և երաժշտության հեղինակները:

Նյութի աղբյուրներ

https://www.youtube.com/watch?v=Ejk6s4wgDcY

Քննարկման հարց և առջադրանք

- Դասարանի համար խորհրդանիշ ստեղծելիս ի՞նչ է պետք հաշվի առնել

ԴԱՍ 7-8

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՀԱՅՈՑ 12 ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐ

Պատմաբանները հաշվել են Մեծ Հայքի 12 մայրաքաղաք: Բոլոր այդ քաղաքները հայոց պատմության անբաժանելի մասն են, պետականության խորհրդանիշները: Պատահական չէ, որ մեր նորօրյա ոստանի քաղաքապետարանի շենքի ճարտարապետության գլխավոր տարրերից են բոլոր մայրաքաղաքների հուշասյունները: Հայոց 12 մայրաքաղաքներն են՝

1.Վան

Վան քաղաքը հիմնադրվել է մ. թ. ա. IX դարի առաջին կեսում՝ Սարդուրի Ա թագավորի նախաձեռնությամբ: Այդ հնագույն շրջանում այն կոչվում էր Տուշպա: Քաղաքն Ուրարտական պետության կենտրոնական շրջանի՝ Բիայնա երկրի անունով հայերը կոչել են Վան: Վան անունն ուղղակի համարում են Բիայնայի հայկական տառադարձությունը, և այն նշանակում է «ապրելու տեղ», «բնակավայր»: Քաղաքը գտնվում է Վանա լճի ափին: Վանում է գտնվել Ծիվինիի՝ արևի աստծո տաճարը և Վարագավանքի համալիրը (6 եկեղեցիներից բաղկացած):

2.Արմավիր

Մ. Խորենացին Արմավիրի հիմնադրումը վերագրում է Հայկ Նահապետի թոռ Արամայիսին:

Արմավիր քաղաքը գտնվել է ներկայիս Արմավիրի մարզի Հայկավան գյուղի մոտ՝բլրի վրա: Քաղաքի հիմնադրման մասին սեպագիր արձանագրություն է թողել Արգիշտի թագավորը: Հռչակավոր Սոսյաց անտառը այստեղ է եղել Ք.ա 331թ.-ին դարձել է Երվանդունիների մայրաքաղաքը: Ունեցել է եռապարիսպ ամրոցներ: Այստեղ կառուցվել է Արտեմիսի և Ապոլոնի պղնձաձույլ, ոսկեզօծ արձանները:

3.Երվանդաշատ

Մայրաքաղաքը կառուցել է Երվանդ վերջին թագավորը մ.թ.ա. 220 թ.-ին, բլրի վրա, Այրարատ նահանգի Երասխաձոր գավառում, ուր միախառնվում են Արաքս և Ախուրյան գետերը: Երվանդաշատի բերդապարիսպները շինված էին անշաղախ որձաքարերով՝ ամրացված երկաթով: Երվանդի մահից հետո մինչև 4-րդ դար Երվանդաշատը Հայաստանի խոշոր քաղաքներից էր, բայց պարսից Շապուհ Երկրորդի զորքերը հիմնահատակ կործանեցին այն:

4.Արտաշատ

Արտաշես Առաջին թագավորը մեր ժողովրդի պատմության ընթացքում հանդես եկած քաղաքական և ռազմական ամենախոշոր գործիչներից էր: Նա հիմնադրեց նոր մայրաքաղաք Ք.ա 180-ական թվականներին և այն կոչեց Արտաշատ: Այստեղ է գտվել Անահիտ աստվածուհու տաճարը, ինչպես նաև Խոր Վիրապի հսկայական փոսը (6 մ): Քաղաքի միջնաբերդը Խոր Վիրապի բլրի վրա էր:

5.Տիգրանակերտ

Տիգրանակերտը կառուցվել է մ.թ.ա. 80-ական թվականներին Աղձնիք նահանգում՝ Տիգրիս գետի հովտում և անվանակոչվել ի պատիվ Հայոց Տիգրան Մեծ արքայի: Ունեցել է 25 մ բարձրությամբ պարիսպներ:

6.Վաղարշապատ

Վաղարշապատի տարածքում բնակավայր է եղել դեռ քարե դարում: Երկրորդ դարի կեսին հռոմեացիները փորձեցին նվաճել Հայաստանն ու դարձնել Հռոմի նահանգ: 163 թվականին երկրորդ անգամ Վաղարշապատը հռոմեացիների կողմից հռչակվեց հայոց մայրաքաղաք:

Վաղարշապատի նշանակությունը մեծացավ հատկապես քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո: Նոր կրոնի նվիրյալները կառուցեցին Հայաստանի քրիստոնեական անդրանիկ մայր տաճարը՝ Սուրբ Էջմիածինը: Այստեղ է գտնվել արևի աստված Միհրի տաճարը, հետագայում նույն վայրում կառուցվել է Սբ. Հռիփսիմե եկեղեցին:

7.Դվին

Սկզբում Դվին կոչել են միայն բերդն ու բլուրը, այնուհետև ողջ քաղաքը, երբեմն էլ Արարատյան դաշտի մի մասը և Արաքս գետը կոչել են Դվնա դաշտ և Դվնա գետ: Որպես մայրաքաղաք՝ Դվինը հիմնադրվել է 4-րդ դարի 30-ական թվականներին, երբ հայոց Խոսրով Կոտակ թագավորը (330-338 թթ.) արքունիքն Արտաշատից տեղափոխեց Դվին: Այստեղ կառուցվել է Կաթողիկե եկեղեցի:

8.Բագարան

884 կամ 885 թ. հայոց երևելիները թագադրում են Աշոտ Բագրատունուն: Նորաստեղծ Բագրատունյաց թագավորությունը պետք է ունենար իր մայրաքաղաքը: Չնայած որ Արշակունիների մայրաքաղաք Դվինը շարունակում էր մնալ Հայաստանի մեծ քաղաքներից մեկը, բայց այն մշտապես գտնվում էր Ատրպատականից հարձակման վտանգի տակ: Բագրատունիները մայրաքաղաք ընտրեցին անառիկ Բագարանը՝ Ախուրյանի աջ ափին: Ունեցել է երեք քարաժայռերից միջնաբերդ, իսկ ամենաբարձր գագաթին եղել են բուրգեր:

9.Ծիրակավան

Աշոտ Բագրատունու մահից հետո գահը ժառանգեց նրա որդին՝ Սմբատ Բագրատունին, և իր նստավայր ու երկրի նոր մայրաքաղաք Ծիրակավանում՝ Սբ. Փրկիչ եկեղեցում, թագադրվեց: Ծիրակավանի բնակչությունը տեղահանվել է 1920 թ., և մի մասը բնակություն է հաստատել Ախուրյանի շրջանի Երազգավորս գյուղում:

10. Կարս

Աշոտ Երկաթի մահից հետո թագավոր հռչակվեց Աբասը (929-953 թթ.), և Կարսը հռչակվեց մայրաքաղաք: Վրացիների և սելջուկների միջև տեղի ունեցած պատերազմների ընթացքում Կարսը ձեռքից ձեռք անցավ: Իսկ 1921 թվականի հոկտեմբերին Կարսի մարզն անցավ Թուրքիային: Հայտի է Կարսի բերդը, միջնաբերդը, Կարսում է գտնվում Առաքելոց եկեղեցին:

11.Անի

Հայոց ոչ մի մայրաքաղաք այնքան լավ չի ուսումնասիրվել, որքան Անին: Անիի պատմության լուսաբանման համար անգնահատելի են Ղևոնդ Ալիշանի ուսումնասիրությունները: Անին հայ պատմիչներից առաջինը հիշատակում է Եղիշեն, այնուհետև Ղազար Փարպեցին: Բագրատունիները կարճ ժամանակաշրջանում երեք մայրաքաղաք փոխելուց հետո հաստատվեցին Անիում: Անին եկեղեցաշատ քաղաք էր: Հայ և օտար պատմիչներն ու ուղեգիրներն Անին անվանում էին հազար ու մեկ եկեղեցիների քաղաք: 1921 թ. Կարսի համաձայնագրով Անին անցավ Թուրքիային: Անիում գտնվող եկեղեցիներից հայտնի են՝ Նռերով եկեղեցին (8-րդ դար) և Հովվի եկեղեցին:

12.Էրեբունի-Երևան

Մեր մայրաքաղաքը՝ Երևանը, աշխարհի հնագույն քաղաքներից է: Նրան տարեկից քիչ քաղաքներ կան: Այդպիսին է, օրինակ, Հռոմը, որը Երևանից քիչ ավելի ուշ է հիմնադրվել: Հռոմի հիմնադրման մասին միայն բանավոր ավանդապատումներ կան, իսկ Երևանն ունի քարի վրա փորագրված իր ծննդյան վկայագիրը: Երևանի հիմնադիրը Արգիշտի I թագավորն է, որը ներկայիս Երևանի տարածքում գտնվող Արինբերդ բլրի ստորոտում կառուցեց Էրեբունի ամրոցը: Այստեղ հայտնաբերված քարե սալի վրա, Ք. ա. 782թ. Արգիշտիի անունից արված արձանագրության մեջ նշված է. «Խալդ աստծո մեծությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին, այս անառիկ ամրոցը կառուցեց և անվանեց Էրեբունի քաղաք՝ ի հզորություն Բիայնայի և ի սարսափ թշնամիների»: Ամրոցի պեղված

միջնաբերդը, թագավորական պալատի ավերակների հետ, վերածվել է բացօթյա թանգարանի, որին կից ստեղծվել է «Էրեբունի» թանգարանը:
Ժամանակակից Երևանը մայրաքաղաք է դարձել 1918թ., երբ վերականգնվեց հայոց պետականությունը և հիմնադրվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Հետագայում այն անընդհատ կառուցապատվել է, ընդարձակվել, ներառելով ոչ միայն Արարատյան դաշտի մշակովի և անմշակ ընդարձակ հողատարածքներ, այլև հարակից շատ գյուղական բնակավայրեր: Դրանցից են Նորքը, Առինջը, Ավանը և այլ բնակավայրեր: Երևանում ապրում է ավելի քան 1 մլն 200 հազ. մարդ: Երևանը Հայաստանի գլխավոր օդային դարպասն է՝ 152 «Զվարթնոց» և «Էրեբունի» միջազգային օդանավակայաններով:

ԷՐԵԲՈՒՆԻ – ԵՐԵՎԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ

1.ՕՐՀՆԵՐԳ

Խոսքը՝ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ
Երաժշտությունը՝ ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

2.ԴՐՈՇ

3.ՋԻՆԱՆՇԱՆ



Մեծ Հայքի սահմանները 350 թ. դրությամբ

Նոր հասկացություններ

Վան,Արմավիր,Երվանդաշատ,Արտաշատ,Տիգրանակերտ, Վաղարշապատ,Դվին,Շիրակավան,Կարս,Անի,Էրեբունի-Երևան, Տուշպա,Բիայնա,Շիվինի,Վարագավանք,Արամայիս,Սոսյաց անտառ, Արտեմիսի ,Ապոլլոնի, Երվանդ Վերջին,Շապուհ, Խոր Վիրապ,Անահիտ ,Աղձնիք,Տիգրան Մեծ,Սանատրուկ, Վաղարշ Ա , Վարդգեսավան , Հռիփսիմե եկեղեցին, Աշոտ Բագրատունի, Բագարան, Ախուրյանի, Երազգավորս, Աշոտ Երկաթի, Աշոտ Գ, Սուրբ Աստվածածին Կաթողիկե եկեղեցի,Նռերով եկեղեցի , Հովվի եկեղեցի ,Հռոմ,Արգիշտի

Հարցեր և առաջադրանքներ

- Թվարկե՛ք պատմական Հայաստանի մայրաքաղաքները:
- Թվարկի՛ր այն հայ թագավորների անունները, ովքեր հիմնել են մայրաքաղաքներ:

- Ո՞վ և ե՞րբ է հիմնադրել Երևանը:

Նյութի աղբյուրներ

https://www.youtube.com/watch?v=nxhMfBYvFmA - օրհներգ

http://www.vem.am/hy/1728?fbclid=IwAR3KBds1-k5GQALsLM7t8c8ZZ54e4cG3l2O-YEz3KHQR2n8mufpAjcErlRo

Գործնական աշխատանք

1.Լրացրե՛ք աղյուսակը

Մայրաքաղաքի անվանում	Հիմնադրման թվական կամ դար	Լրացուցիչ տեղեկություններ

2.Ընկերներիդ հետ ստեղծի՛ր հայոց մայրաքաղաքների քարտեզը՝ օգտվելով պաստառներից և այլ լրացուցիչ աղբյուրներից: